



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 19/3 « 04 » 02 2020թ.

## 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

### հրամայում եմ

1. 2020-2021 թթ. ուսումնական տարվա երկ րորդ կիսամյակում (2021թ. Փետրվարի 8-ից) Երևանի պետական համալսարանում սահմանել ուսումնական գործընթացի կազմակերպման հետևյալ կարգը.

1. Ուսումնական գործընթացը կազմակերպել առկա և հեռավար ձևերի համադրությամբ:
2. Առկա և հեռավար դասընթացները կազմակերպել համաձայն դասացուցակի: Դասերի սկիզբը սահմանել 9.30-ին: Դասերի տևողությունը սահմանել 80 րոպե՝ 5 րոպե դասամիջոցով:
3. Առկա և հեռավար դասընթացների ուսումնական նյութերը հասանելի պետք է լինեն <https://e-learning.yasu.am/> հարթակում, որտեղ անհրաժեշտ է տեղադրել դասընթացի պլանը և հեռավար դասընթացի դեպքում՝ համապատասխան հղումները:
4. Հեռավար դասընթացներն անցկացնել բացառապես <https://e-learning.yasu.am/> հարթակում:
5. Առկա և հեռավար ձևերով դասերի անցկացման օրերը չպետք է համընկնեն:
6. Ուսումնական գործընթացի կազմակերպմամբ պայմանավորված՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումներում կիրառվող հակահամաճարակային կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը վերապահել համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին:

2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին և ուսանողներին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում 2021 թ. Փետրվարի 8-ից:

Ուեկտորի ժ/պ

Գ.Գ. Գևորգյան